

ՀՀ բանկային համակարգի 2009-ի գործունեության ամփոփում

2008-ի երկրորդ կեսից սկսված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքներն իրենց զգացնել տվեցին ՀՀ տնտեսության վրա, որն էլ իր հերթին ազդեց ՀՀ բանկային համակարգի գործունեության և ցուցանիշների վրա, հատկապես 2009 թվականի չորրորդ, ինչպես նաև հաշվետու տարվա առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում: Բանկային համակարգի 2009-ի գործունեության արդյունքների վրա ոչ պակաս չափով ազդեց նաև առաջին եռամսյակի ընթացքում դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի կտրուկ բարձրացումը 20-ից 25%-ի չափով: Չնայած վերոհիշյալին, 2009-ին Հայաստանի բանկային համակարգը գործել է բնականոն հունով և նույնիսկ ապահովել աճ որոշ ցուցանիշների գծով:


Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2009-ի ընթացքում աճել են 29.9%-ով կամ 309.9 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 1,346.1 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել են մոտ 79.7 մլրդ դրամով կամ 6.3%-ով: Հաշվետու տարվա ընթացքում ակտիվների վերոնշյալ աճը պայմանավորված է նաև դրամի նկատմամբ դոլարի արժևորմամբ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարում ընդհանուր ակտիվներն ավելացել էին 32.4%-ով կամ 253.4 մլրդ դրամով:

Վարկային ներդրումներ


Հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 20.4%-ով կամ 131.7 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 16.5%-ով կամ 13.2 մլրդ դրամով և տարեվերջին կազմել համապատասխանաբար 778.2 և 93.1 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել են 7.7%-ով կամ 55.8 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 9.0%-ով կամ 7.7 մլրդ դրամով: 2008-ին վարկային ներդրումներն աճել էին 51.3%-ով կամ 219.3 մլրդ դրամով, ներդրումներն արժեթղթերում նվազել 15.9%-ով կամ 15.1 մլրդ դրամով: 2009-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 57.8%-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 60.2%-ը կամ 468.3 մլրդ դրամ, և այս ցուցանիշը տարվա ընթացքում աճել է 39.9%-ով կամ 133.5 մլրդ դրամով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել են 1.4%-ով կամ 6.5 մլրդ դրամով նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 4.1%-ի կամ 13.3 մլրդ դրամի դիմաց:

2009-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2009-ի ընթացքում նվազել են 11.2%-ով կամ 33.3 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 264.2 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել է 14.1% կամ 32.5 մլրդ դրամ: Հաշվետու տարվա վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 33.9%-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 23.4%-ը կամ 182.2 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 10.9%-ը կամ 85.1 մլրդ դրամ: Տարվա ընթացքում սպառողական վարկերի ծավալը նվազել է 20.5%-ով կամ 47.0 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինն աճել 0.3%-ով կամ 0.24 մլրդ դրամով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում նվաճ ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 0.9% կամ 1.5 մլրդ դրամ և 1.7% կամ 1.4 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ 2009-ի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի նվազումը հիմնականում պայմանավորված է եղել առկա համաշխարհային ֆինանսական ճգնաժամով, որի գոյությունը բանկերին ստիպել է գործել էլ ավելի զգուշավոր:


Համակարգում վարկային ներդրումների փոփոխման դինամիկան



Պարտավորություններ


2009-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,059.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 32.8%-ով կամ 261.4 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու տարվա չորրորդ եռամսյակում աճել է 6.0%-ով կամ 59.7 մլրդ դրամով: 2009-ին ընդհանուր պարտավորությունների աճը պայմանավորված է եղել նաև արտարժութային պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու տարվա ընթացքում աճել են 44.8%-ով կամ 105.0 մլրդ դրամով, իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 66.5%-ով կամ 146.5 մլրդ դրամով և տարեվերջին համապատասխանաբար կազմել 339.5 և 366.9 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների տարեկան աճը կազմել է 45.3% կամ 77.6 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 105.4% կամ մոտ 94.0 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ վերոնշյալ ցուցանիշների աճ է զրանցվել նաև հաշվետու տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել են 1.9%-ով կամ 6.2 մլրդ դրամով, այդ թվում ժամկետային ավանդները՝ 2.9%-ով կամ 7.0 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 24.8%-ով կամ 72.8 մլրդ դրամով, այդ թվում ժամկետային ավանդները՝ 34.0%-ով կամ 46.5 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 18.1%-ով կամ 36.0 մլրդ դրամով, այդ թվում ժամկետային ավանդները՝ 31.3%-ով կամ 40.9 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 10.7%-ով կամ 26.5 մլրդ դրամով, այդ թվում ժամկետային ավանդները՝ 10.3%-ով կամ 10.2 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) ծավալը հաշվետու տարվա վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 66.7%-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը 2009-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)




- Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ
- Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
- Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ
- Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

Մլրդ դրամ
Համակարգում ժամկետային ավանդների փոփոխման դինամիկան




Մլրդ դրամ
Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան



Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 20.3%-ով կամ 48.4 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 286.8 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին, ընդ որում՝ ընդհանուր կապիտալը չորրորդ եռամսյակում ավելացել է 7.5%-ով կամ 20.0 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա ընթացքում ավելացել էր 43.6%-ով կամ 72.4 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստը) ցուցանիշը չորրորդ եռամսյակում աճել է 19.0%-ով կամ 14.4 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 90.3 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 31.5%-ը, ընդ որում՝ վերը նշված ցուցանիշը տարվա կտրվածքով նվազել է 5.8%-ով կամ 5.5 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու տարվա ընթացքում աճել է 23.7%-ով կամ 36.2 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 188.6 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 65.8%-ը: Հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի աճ է գրանցվել նաև հաշվետու տարվա չորրորդ եռամսյակում և այն կազմել է 4.9% կամ 8.7 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ արձանագրենք, որ նախորդ տարվա ընթացքում կանոնադրական կապիտալն ավելացել էր 37.8%-ով կամ 41.8 մլրդ դրամով:



Եկամուտներ եկ ծախս

Հաշվետու տարվա ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտներն աճել են 13.8%-ով կամ 22.7 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 29.6%-ով կամ 37.7 մլրդ դրամով՝ տարբերվելով կազմելով համապատասխանաբար 186.3 և 165.2 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր եկամուտների աճը կազմել է 39.3% կամ 52.6 մլրդ դրամ, իսկ ծախսերինը՝ 32.8% կամ 40.8 մլրդ դրամ:


Շահույթ

ՀՀ բանկային համակարգում հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 15.4 մլրդ դրամ շահույթ, որը 2008-ին ստացված մաքուր շահույթի ծավալին զիջել է 12.7 մլրդ դրամով կամ 45.2%-ով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում ապահովվել է 8.0 մլրդ դրամի մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմուն ցուցանիշին զիջել է 2.7 տոկոսային կետով կամ 225.3 մլն դրամով:

Ամփոփ ցուցանիշներ

2009-ի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 6.08%, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.26%: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության անկում անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն նվազել է 3.37 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 2.14 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



ՀՀ բանկային համակարգի մակրոտնտեսական բնութագրիչները

Հ/Հ	Տնտեսությունում ՀՀ բանկային համակարգի դերը բնութագրող ցուցանիշները	01.01.2007 թ.	01.01.2008 թ.	01.01.2009 թ.	01.01.2010 թ.
1	Ընդհանուր ակտիվների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	20.4	25.0	28.4	42.5
2	Ընդհանուր վարկային ներդրումների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	9.5	13.6	17.7	24.6
3	Ընդհանուր կապիտալի հարաբերությունը ՀՆԱ-ին, %	4.5	5.3	6.5	9.1
4	Ֆիզիկական անձանց ավանդների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	5.4	6.3	6.4	10.7

2009-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,
դրանց աճը չորրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Յ/Յ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ	Զբաշ. շահույթ I-IV եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ	162752.4	9.3	1	94048.7	9.1	127334.0	6.4	1	20586.6	11.0	35418.4	21.4	1	14567.2	0.0	12891.3	4254.4
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստ.	135810.7	-2.0	2	79947.9	-7.1	118667.2	-2.8	2	33303.7	-8.4	17143.5	4.0	5	7556.6	0.0	9251.3	1660.7
3	Արդշինհիմվեստբանկ	119481.2	-2.8	4	55640.4	-3.4	92146.1	-4.2	5	30053.9	-0.7	27335.1	2.5	2	15513.6	0.0	7990.9	1935.2
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	120779.1	27.7	3	72844.0	4.8	95492.1	32.6	4	16981.7	8.6	25287.0	12.0	3	13906.2	0.0	7183.9	1126.0
5	Կոնվերս Բանկ	78941.4	3.3	8	45625.7	13.2	66802.9	3.9	8	13261.9	-1.6	12138.5	0.4	9	1296.4	0.0	8120.5	-1240.9
6	Յունիբանկ	108600.8	1.2	5	66701.1	17.4	96988.9	1.3	3	45484.0	-9.9	11611.9	-0.2	10	8599.7	0.0	3202.6	153.0
7	Հայէկոնոմբանկ	52704.5	5.8	9	30769.1	5.2	44075.0	6.4	9	6156.8	6.3	8629.5	2.7	13	2333.3	0.0	5855.5	173.0
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	103503.0	11.3	6	67835.7	50.0	81778.8	14.1	6	14512.9	28.7	21724.2	1.9	4	18228.4	0.0	3622.0	1516.9
9	Ինեկոբանկ	48483.7	5.7	11	28121.1	-1.4	38314.4	5.8	10	9463.3	12.6	10169.3	5.2	11	2353.2	0.0	6042.7	895.1
10	Հայքիզնեսբանկ	93624.1	-2.8	7	60395.2	6.4	77219.2	-4.2	7	17740.7	20.9	16404.9	3.9	6	13450.0	0.0	2795.1	1057.4
11	Անելիք Բանկ	49019.9	10.4	10	25302.4	18.7	33752.0	14.1	12	7363.1	9.3	15267.8	3.1	7	14300.0	0.0	970.1	101.2
12	Աոելկսիմբանկ- Գազպրոմբանկի Խումբ	39025.1	21.5	14	21712.0	15.7	25009.3	13.5	14	9374.2	17.3	14015.8	38.8	8	12347.3	45.3	1393.5	199.2
13	Արցախբանկ	44679.9	8.5	12	30950.3	2.0	37099.5	6.6	11	4150.0	10.3	7580.4	19.0	18	5561.2	118.6	1434.3	1116.6
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	41342.0	42.4	13	16476.8	3.7	33493.7	57.3	13	3715.3	7.6	7848.3	1.3	16	6128.0	0.0	1339.4	579.9
15	ԱրմսվիսԲանկ	29711.6	-6.4	15	10579.6	9.8	21649.3	-16.4	15	2507.8	4.7	8062.3	38.0	15	7002.0	40.0	1012.3	553.2
16	Զարգ. Հայկական Բանկ	21571.1	12.1	16	14129.7	19.5	15322.5	15.7	16	6361.0	15.7	6248.6	4.1	19	4556.7	0.0	1339.8	553.4
17	Պրոմեթեյ Բանկ	21531.5	5.4	17	10489.9	-6.5	11849.9	9.8	17	1288.7	3.4	9681.5	0.4	12	7200.0	0.0	2432.3	649.2
18	Կասկադ Բանկ	19068.7	-2.7	18	11356.1	-7.5	11461.0	-6.0	19	1321.2	-1.4	7607.7	2.7	17	7248.9	0.0	91.5	413.0
19	Բիբլոս Բանկ Հայաստան	17589.8	-10.7	19	14828.1	-2.0	9206.5	-19.5	20	2255.6	8.6	8383.3	1.5	14	8382.2	0.0	0.4	171.1
20	ԲՏԱ Բանկ	8423.3	-2.7	22	4157.2	-13.2	3327.0	5.2	22	623.8	89.1	5096.4	-7.3	22	6520.0	0.0	-1475.9	-96.4
21	Պրոկրեդիտ Բանկ	16996.5	13.4	20	12664.0	22.5	11543.7	19.9	18	2325.7	13.6	5452.8	1.7	21	6090.0	0.0	-637.2	-41.9
22	Մելլաթ Բանկ	12464.7	7.3	21	3607.7	-21.5	6764.4	19.5	21	15.6	-2.5	5700.3	-4.3	20	5500.0	0.0	121.4	-374.2
	Ընդամենը	1346105.0	6.3		778182.7	7.7	1059297.4	6.0		248847.5	2.9	286807.5	7.5		188640.9	4.9	74977.7	15355.1